ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն ..............................
«.....» ......................2023թ.

ՆՈՐԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

I[ա] դասարան
Նազարյան Մարգո

## Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

ՈւՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ աշխատանքները ուստարվա դպրոցական կրթության կարևոր բաղադրիչ է, որի հիմնական խնդիրներն են սովորողների մեջ քաղաքացիական պատասխանատվության և իրավական գիտակցության ձևավորումը: Պետք է աշակերտնրի մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ:Կրթել և դաստիարակել սերունդ մեր պետականության ամրակայման և զարգացման հայեցակարգին համապատասխան: Պետք է առաջնորդվել ուսուցման և դաստիարակության մեթոդների համակարգված և միահյուսված սկզբունքով: Ստեղծել համերաշխ կոլեկտիվ, սերմանել փոխադարձ հարգանք մեծերի նկատմամբ:Կանխել բացակայությունները : Բացահայտել և գնահատել ԿԱՊԿՈՒ սովորողներին՝ համագործակցելով ՄԿԱ գծով փոխտնօրենի, հոգեբանի , ուսուցչի օգնականների և ՏՄԱԿ-ի հետ:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. սովորեցնել ճանաչել շրջապատը, տեսնել բնության հրաշալիքները, ծանոթանալ հայ մշակույթի գործիչներին, ընկալել արվեստը, գիտակցել ազգայինը, մասնակցություն ունենալ դպրոցի մշակութային կյանքին, հարգալից վերաբերմունք այլ ազգերի մշակույթների նկատմամբ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ նպաստում է ճանաչել իր հայրենիքը, Հայաստանի Հանրապետության դրոշը,զինանշանը, իմանալ օրհներգը, բնակավայրի աշխարհագրական առանձնահատկությունները,գնահատել ազգի դերն ու նշանակությունը, ճիշտ պատկերացում ունենալ անցյալի և ներկայի մասին ,ծանոթ լինել հայ ժողովրդի որոշ իրադարձությունների, գործիչների ,մշակութային արժեքների:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. հանրակրթական դպրոցի անբաժանելի մասն է, այն նպատակաուղղված է անձի բազմակողմանի զարգացմանը, շարժողական ունակությունների մշակմանը, կեցվածքի ձևավորմանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. սեր արթնացնել հայրենի բնության նկատմամբ, հոգատար վերաբերմունք բնության բարիքների, կենդանիների, թռչունների, շրջապատի, բնական ռեսուրսների նկատմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. արժևորել աշխատանքի դերը մարդու կյանքում, գնահատել ուրիշների աշխատանքը, ճիշտ վարքագիծ և խնայողական վերաբերմունք յուրաքանչյուր աշխատանքի նկատմամբ: Ձևավորել աշխատասիրություն, խմբում աշխատելու կարողություն :

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ- Կազմակերպել ծնողական ժողովներ: Ծնողներին տեղյակացնել դպրոցի հիմնախնդիրները, մասնակից դարձնել դպրոցական միջոցառումներին կազմակերպմանը: Ակտիվացնել և պահպանել ծնող-ուսուցիչ-աշակերտ փոխադարձ կապը: Ճիշտ կազմակերպել ծնողկոմիտեի աշխատանքը:

# Դասարանի ընդհանուր բնութագիր

Առաջին դասարանում սովորում են 26 աշակերտ: Որոշակի աշխատանքից հետո հարմարվել են դպրոցական կյանքին ուշադիր են դպրոցական պարագաների նկատմամբ , հետևում են դպրոցական կարգ ու կանոնին: Յուրաքանչյուր աշակերտ աննկրկնելի անհատականություն է և պետք է զգա ուսուցչի սերն ու հոգատարությունը: Հարկավոր է թափանցել երեխայի ներքնաշխարհի, փորձել գտնել և վեր հանել նրա հոգու ծիլը , հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Գալդ բարի, սիրելի՛ փոքրիկ:<br>Ո՞վ եմ ես: Արի ծանոթանանք | սեպտեմբեր<br>6.  09 | Մ.Նազարյան |
| 2 | Դպրոցը մեր տունն է.<br>Ծանոթանալ դպրոցական կարգ ու կանոնին, ռեժիմին. աշակերտների իրավունքներին ու պարտականություններին: | սեպտեմբեր<br>13.  09 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 3 | Զրույց՝. «Իմ Հայաստան»թեմայով. | սեպտեմբեր<br>20.  09 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 4 | Զրույց՝«Ի՞նչն է լավ,ի՞նչն է վատ» թեմայով: | սեպտեմբեր<br>27.   09 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 5 | Իմ ուսուցիչը.<br>Արժևորել ուսուցչի դերը հասարա կության մեջ: | հոկտեմբեր<br>4.  10 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 6 | Թարգմանչաց տոն.<br>Հայոց գրերի դարավոր անցյալը . դերն ու նշանակությունը ազգապահպան գործում: | հոկտեմբեր<br>11.  10 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 7 | Ա հնչյուն-տառի շնորհանդես | նոյեմբեր<br>1.  11 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 8 | Աշնանային պարահանդես.<br>Սիրել, գնահատել բնության գեղեցկությունը | նոյեմբեր<br>8.  11 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 9 | Համագործակցություն.<br>Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում: | նոյեմբեր<br>15.  11 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 10 | Առողջ ապրելակերպ.<br>Հետևողական լինել ֆիզիկական զարգացմանը, կեցվածքի ձևավորմանը: | նոյեմբեր<br>22.  11 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 11 | Անվտանգ երթևեկություն.<br>Ծանոթանալ երթևեկության նշաններին: Հետևել ճանապարհային կանոններին: | նոյեմբեր<br>28.  11 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 12 | Ովքեր են իմ ընկերենրը.<br>Ինչն են կարևորում ընկերության մեջ: | դեկտեմբեր<br>612 | Մ.Նազարյան<br>աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| 13 | Կախարդական ձմեռն ու չարաճճի փաթիլներն.<br>Ձմռան առանձնահատկությունները: | դեկտեմբեր<br>13. 12 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 14 | Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ | դեկտեմբեր<br>20.12 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 15 | Հայկական բանակ.<br>Սովորել «Ես քո զինվորն եմ Հայաստան» բանաստեղծությունը | Հունվար<br>24 . 01 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 16 | Հայրենիքը սկսվում է ընտանիքից.<br>Հայրենասիրության ձևավորում | հունվար<br>31. 01 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 17 | Այսօրվա գործը վաղվան չեն թողնի.<br>Կարողանալ կազմակերպել առօրյան, հստակեցնել գործերը. հանգիստը, պարտականությունները: | փետրվար<br>7. 02 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 18 | Կոնֆլիկտների հաղթահարում<br>Կշռադատված վարքագծի ձևավորում: | փետրվար<br>14 02 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 19 | Անաղարտ պահենք մեր մայրենին.<br>Թումանյանական օրեր՝ «Հեքիաթն է կանչում»: | փետրվար<br>21. 02 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 20 | Զարթոնք.<br>Տեսնել բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:<br>Էքսկուրսիա մոտակա այգի: | փետրվար<br>21. 02 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 21 | Իմ իրավունքները և պարտականություն | մարտ<br>6. 03 | Մ.Նազարյան |
| 22 | Համակարգիչը ընկե՛ր է, թե թշնամի.<br>Համակարգիչի դրական և բացական կողմերը: | մարտ<br>13. 03 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 23 | Եկեղեցական տոներն ու հայկական ծիսակատարությունները.<br>Իմանալ ազգային հին տաղավար տոները: Սուրբ Զատիկ. | ապրիլ<br>3. 04 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 24 | Վատ սովորություններ.<br>Ինչպես պայքարել դրանց դեմ | ապրիլ<br>10. 04 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 25 | Բնական աղետներ.<br>Նախնական գիտելիքներ ունենալ ծայրահեղ իրավիճակներում կողմնորոշվելու համար: | ապրիլ<br>17. 04 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 26 | Մեր շրջապատի բնության հրաշքները.<br>Ճանաչողական արժեքների ձևավորում: | ապրիլ<br>25. 04 | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 27 | Մայիս ամիսը, որպես հայ ժողովրդի հաղթանակների ամիս: | 2.02<br>մայիս | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 28 | Մայիս ամիսը, որպես հայ ժողովրդի հաղթանակների ամիս: | 8 . 05<br>մայիս | Մ.Նազարյան<br>աշակերտ |
| 29 | ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՆԴԵՍ | մայիս<br>13. 05 | Մ.Նազարյան |
| 30 | Զրույց «Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին» թեմայով:<br>**Ողջույն ամառ** | մայիս<br>22. 05 | Մ.Նազարյան<br>աշակերտ |